«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՂԵԿԱՎԱՐ ԲԱԴԱԼՅԱՆ ԿԱՄՈ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1 5
Մասնագիտական կողմնորոշմանը ներկայացվող պահանջները 5
Ինչպես ընտրել մասնագիտություն 5
10 հմտություններ, որ պետք են ցանկացած աշխատանքի դեպքում 7
Նպատակը 10
Գլուխ 2 13
Սովորողների հիմնարար հմտությունները 13
Գլուխ 3 15
Ինչ է մասնագիտական կողմնորոշումը 15
Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ծրագրային հիմնադրույթներ 17
Հիմնական հասկացությունների սահմանումները 18
Գլուխ 4 19
«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները 5-7-րդ դասարաններում 19
Եզրակացություն 23
Օգտագործված գրականության ցանկ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը մայրն է ամեն բարիքի, իսկ ծուլությունը՝ չարիքի:

«Արհեստ ունեցիր, մի՛ եղիր նազուկ: Արհեստն է մարդուն ոսկե բիլազուկ:»
Հովհաննես Շիրազ

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով:

Այս առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում նպատակ ունի աշակերտներին զինելու արդի տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, որոնք ստեղծում են անձի ձևավորումը, ազգային ավանդույթների պահպանումը և, ի վերջո, նպաստում են երկրի զարգացմանը: Այն նաև նախապատրաստում է աշակերտներին ժամանակակից աշխատանքային կյանքի պահանջներին, խթանում է երևակայական և ստեղծագործական մտածողությունը, զարգացնում է վերլուծելու, համեմատելու և ստեղծագործելու ունակությունները:

Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշխատանքներ են իրականացվում կրթա-դաստիարակչական գործընթացի ժամանակ՝ որպես երկարատև և շարունակական գործընթաց, նպատակ ունենալով հասնել նրան, որ աշակերտները կատարեն գիտակցված մասնագիտական ընտրություն:

Ներկայումս աշխատաշուկայում մոտավորապես 6000 մասնագիտություն է հաշվառվում՝ կապված նորագույն տեխնոլոգիաների հետ: Պետք է կարևորել այդ մասնագիտությունների մասին տեղեկատվության տրամադրումը աշակերտներին և ծնողներին:

Մեր արագ փոփոխվող դարաշրջանում մասնագիտական կողմնորոշման հարցը վերահմաստավորման կարիք ունի: Եթե նախկինում մարդկանց նյութական պահանջմունքները սահմանափակ էին, ապա այժմ աշակերտների զգալի մասը կարևորում են դպրոցից հետո ուսման շարունակելը հետագայում ավելի բարձր վարձատրվող աշխատանք

ունենալու համար: Հետևաբար, շատ կարևոր են աշակերտների մասնագիտական կողմնորոշման և կրթության հարցերը:

Մասնագիտական ընտրությունը շատ կարևոր է մարդու կյանքում, ուստի դրան պետք է աշակերտներին նախապատրաստել սկսած դպրոցից՝ հաշվի առնելով անձի առանձնահատկությունները ցանկացած պահին և ներկայում, և ապագայում: Այն աշակերտի համար խնդիր է այն առումով, որ նա հաշվի առնելով իր բնավորությունը և յուրահատկությունները պետք է ընտրի այնպիսի աշխատանք, որը իր համար կլինի և' հաճելի, և' իր ունակություններին համապատասխան:

Ճիշտ մասնագիտական ընտրություն կատարելու համար, աշակերտն արդեն իսկ դպրոցից պետք է ստանան անհրաժեշտ տեղեկատվություն տվյալ ոլորտի մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Լիարժեք տեղեկատվությունը նրանց կօգնի գիտակցված ընտրություն կատարելու՝ հաշվի առնելով իր գիտելիքները, ունակությունները և հնարավորությունները՝ հետագայում մրցունակ և պահանջված մասնագետ լինելու համար: Թող ինքը ընտրի իր մասնագիտությունը, թող փորձի, նույնիսկ սխալվի, բայց այն թող իր ընտրությունը լինի, որպեսզի հետագայում նա այդ ընտրած աշխատանքից բավականություն ստանա: Աշակերտներին պետք է օգնել ճիշտ ընտրել մասնագիտությունը՝ ըստ ստեղծագործական ունակությունների, իր գիտելիքների և կարողությունների, որպեսզի հետագայում զերծ մնան հետագա հիասթափություններից և լինեն վստահ ապագայի նկատմամբ:

Գլուխ 1

Մասնագիտական կողմնորոշմանը ներկայացվող պահանջները

Ինչպե՞ս ընտրել մասնագիտություն

Եվ բազմամյա փորձով կայացած արհեստավարժ մասնագետը, և երիտասարդ մասնագետը, հաճախ մտածում են նույն բանի մասին՝ արդյո՞ք նրանք ճիշտ են ընտրել իրենց մասնագիտությունը:

Խնդրի լուծման համար հոգեբանները առաջարկում են չորս եղանակ, որոնք ներկայացված են ներքո:

Ենթադրենք, որ դուք ֆինանսական վերլուծող եք, իսկ Ձեր հարազատները համոզված են, որ Ձեզանից լավ մանկավարժ կստացվեր: Լավագույն ընկերը համոզված է, որ Դուք պետք է հոգեբան դառնաք: Իսկ գործընկերները կարծում են, որ Ձեր ընդունակություններով պետք է թարգմանիչ աշխատել:

Բոլոր այդ մարդիկ կարող են իրենց տեսանկյունից ճիշտ լինել: Մտածել եք դուք արդյոք երբևե՝

ճի՞շտ մասնագիտություն եք ընտրել Դուք: Հոգեբանները մի քանի մեթոդիկա են առաջարկում, որի միջոցով Դուք կարող եք պարզել՝ Ձեր գործով եք Դուք զբաղվում, թե ոչ:

1. Թերթային թեսթ

Վերցրեք մի ամսվա ընթացքում կուտակված թերթերի կապը և ընդգծեք այն բոլոր հոդվածները, որտեղ նկարագրված մարդիք կամ նրանց մասնագիտությունները Ձեզ հետաքրքրում են: Փորձեք խմբավորել այդ հոդվածները 3 խմբերի: Ի՞նչ ստացվեց: Ձեզ հետաքրքրում էր դատավորի, վաճառո՞ղի, վարորդի՞, թե ակնաբույժ-վիրաբույ՞ժի առօրյան:

2. Անհամապատասխանության վերլուծություն

Հնարավոր է, որ Ձեզ համար անտանելի է առավոտյան ժամը 8-ին աշխատանքի գնալը: Ձեր աշխատանքային ոճի նախընտրություններն էլ որոշում են Ձեր մասնագիտությունը: Մեզանից յուրաքանչյուրը պատճառներ ունի, որի հետևանքով մի մասնագիտություն նրան համապատասխանում է ավելի շատ քան մյուսը: Անհրաժեշտ է միայն պարզաբանել ներքին խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս մարդուն աշխատել այս կամ այն ոլորտում: Հոգեբանները դրան անվանում են անհամապատասխանության վերլուծություն՝ մի կողմից Ձեր նախընտրությունների և կարիքների, մյուս կողմից՝ աշխատանքային պահանջների անհամապատասխանություն:

3. Ազատ տեղերի տոնավաճառ

Ձեզ հետաքրքրող մասնագիտությունների մասին ինֆորմացիա ստանալու ամենալավ տեղը՝ ազատ տեղերի տոնավաճառն է: Դուք կարող եք 2 կամ 3 դրույքով աշխատել, բայց ազատ տեղերի տոնավաճառ այցելելու և իմանալու, թե աշխատանքի շուկայում որ մասնագիտություններն ավելի մեծ պահանջարկ ունեն, ոչ մի ամոթալի բան չկա:

Դուք կարող եք զարմանալ, թե ինչքան մասնագիտություններ կան, որոնց մասին նույնիսկ չէիք լսել, սակայն որոնք իդեալականորեն համապատասխանում են Ձեզ, —

համարում է Կարլ Արլրիկսը (Karl Arlrichs)՝ հոգեբան, ով զբաղվում է Նյու-Յորքյան ընկերությունների համար աշխատակազմ ընտրելով: Նույնիսկ հասարակ մատուցողուհին կարող է սուրճի արարողության գծով մասնագետ դառնալ: Իսկ գիտե՞ք, թե ինչով են զբաղվում էթոլոգները:

4. Անձի հատկությունների թեսթավորում

Գոյություն ունեն այսպիսի տասնյակ թեսթեր: Ձգտումներին, տիրապետություններին և վերահսկման մասին տրված հարցերին Ձեր տված պատասխանների հիման վրա որոշում են Ձեր ցանկությունների և ձգտումների դրդապատճառները, օգնում են կոնկրետ մարդու համար որոշել մասնագիտության տիպը:

Այսօր, գրեթե բոլոր մասնագիտություններում, աշխատողներից պահանջում են համակարգչային գիտելիքներ, օտար լեզուների իմացություն, թիմային աշխատանքի և որոշումներ կայացնելու հմտություններ, խնդիրներ լուծելու կարողություն, ճկունություն, հետևողականություն:

10 հմտություններ, որ պետք են ցանկացած աշխատանքի դեպքում:

Երեխաները պետք է տեղեկացվեն, որ այժմյան աշխատաշուկայում արժևորվում են այն աշխատողները, ովքեր ունեն ներքո թվարկված **հմտությունները.**

1. *Մտքերը գրավոր շարադրելու կարողություն:*
   Գործատուների մեծ մասը կորցնում է ձեզ հարցազրույցի հրավիրելու ցանկությունը, եթե ձեր ռեզյումեի կամ ուղեկցող նամակի մեջ նկատում է ուղղագրական սխալներ:
   Անգամ եթե ձեր աշխատանքը բոլորովին կապ չունի տեքստերի հետ, միևնույնն է, դուք վաղ թե ուշ ստիպված եք լինելու գրել նամակներ, մասնագիտական ցուցումներ, հաշվետվություններ, առաջադրանքներ և այլն: Իսկ եթե չզլանաք և փորձեք դպրոցում կատարելագործել մայրենի լեզվի ձեր իմացությունը, ապա հետագայում չեք բախվի նման խնդրի:
2. *Գեղեցիկ խոսելու կարողություն:*

Այս կետը սերտորեն կապված է նախորդի հետ: Պրեզենտացիաների, հանդիպումների ժամանակ գրագետ խոսելու կարողությունը պարտադիր պայման է: Անշուշտ, գործընկերների հետ շփվելու և լավ հարաբերություններ ստեղծելու համար դա նույնպես կարող է պետք գալ: Գեղեցիկ խոսելը չի նշանակում խոսել բացառապես գրքային հայերենով: Գեղեցիկ բանավոր խոսքի կանոններն այլ են. ժպիտ, դիմացինին լսելու և չընդհատելու կարողություն, զրուցակցին անունով դիմելու սովորություն /ի դեպ, մարդու համար կարևոր է և հաճելի, երբ հիշում և անունով են դիմում իրեն/, հետևողական և տրամաբանորեն մտքերը շարադրելու, հստակ պատասխաններ տալու կարողություն:

3. *Ինքնավստահություն և համառություն:*

Այս հատկանիշն առաջին հերթին ձեզ է հարկավոր, չէ որ ուրիշներին միշտ էլ ձեռնտու կլինի, եթե դուք լսեք ուրիշների հրամանները կամ մշտապես համաձայնեք այլոց կարծիքի հետ և ձեր կարծիքը չասեք:

Եթե ուզում եք աշխատավայրում ինչ-որ բանի հասնել, պետք է կարողանաք ինքնավստահ լինել և հավատալ ինքներդ ձեր կարողություններին: Իհարկե, պետք չէ ինքնավստահությունը խառնել մեծամտության հետ, առավել ևս՝ հարցազրույցի ժամանակ:

4. *Ժամանակը տնօրինելու կարողություն:*

Անգամ եթե տվյալ հանձնարարությունը ձեզ հետաքրքիր չէ, դուք, միևնույնն է, պետք է կարողանաք ճիշտ բաշխել ձեր ժամանակը և ամեն ինչ հասցնեք ժամանակին:

Միջինում աշխատողները ավելի քան 2 ու կես ժամ ծախսում են սոց. Ցանցերում: Իհարկե, եթե աշխատանքն արդեն ավարտել եք և այլ պլանավորված գործեր չունեք, դուք կարող եք ձեզ թույլ տալ նաև այդ ազատությունը:

5. *Մասնագիտական կապեր ստեղծելու կարողություն:*

Գործատուն ինքը դժվար թե ձեզնից պահանջի դա, սակայն ձեր ոլորտի այլ մասնագետների հետ կապի մեջ լինելը և նրանցից փորձ փոխառելը ձեզ համար միայն օգտակար կլինի:

Մասնակցեք դասընթացների, միջոցառումների, որտեղ կհանդիպեք ձեր ոլորտի առաջադեմ մասնագետներին՝ ձեռք բերելով հմտություններ: Նրանց հետ շփվելով՝ դժվարության դեպքում միշտ կկարողանաք խորհուրդ հարցնել նրանցից:

6. *Տեխնոլոգիական հմտություններ:*

Այսօր համակարգչային ծրագրերից գլուխ չհանելը պարզապես ծիծաղելի է: Պարտադիր չէ համակարգիչն ինքնուրույն ֆորմատ անելը, սակայն ծրագիր ներբեռնելը, անհրաժեշտ տեղեկատվություն գտնելն ու ճիշտ ներկայացնելը, գեղեցիկ պրեզենտացիա կազմելը, համակարգիչը չփչացնելը և այլ տարրական բաներից տեղյակ լինելը պարզապես անհրաժեշտ է:

Հավատացեք, որքան ավելի սերտ կապերի մեջ լինեք տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, այնքան ավելի մեծ է հավանականությունը մասնագիտական աճի հնարավորություն ստանալու համար:

7. *Խնդիրներ լուծելու կարողություն:*

   Աշխատել ըստ հստակ կանոնակարի այնքան էլ դժվար չէ, բայց իսկապես հետաքրքիր ու կարևոր նշանակություն ունեցող նախագծեր հանձնարարվում են միայն այն անհատներին, ովքեր կարողանում են ամեն իրավիճակի նայել հետաքրքիր տեսանկյունից և արագ լուծել բոլոր խնդիրները:

   Եթե դուք տիրապետում եք ոչ միայն ձեր մասնագիտական որակներին, այլև կարողանում եք արագ ելք գտնել ցանկացած իրավիճակից, ապա դուք իսկապես անգնահատելի աշխատակից եք:

8. *Վաճառելու կարողություն:*

   Խոսքը այս դեպքում հաճախորդներ ներգրավելու մասին չէ, պարզապես պետք է փոքր-ինչ «առևտուր» անելու կարողություն ունենալ: Այդ ամենը ձեզ պետք է, եթե ցանկանում եք բանակցել ձեր աշխատավարձի , պայքարել ձեր նախագծի իրականացման համար, երկարաձգել նախագծի վերջնաժամկետը, փոփոխություններ մտցնել գործի մեջ և այլն, և այլն:

9. *Թիմում աշխատելու կարողություն:*

   Այս հմտության մասին թերևս ամենից հաճախ են հարցեր հնչում հարցազրույցների ժամանակ: Յուրաքանչյուր գործատու ցանկանում է վստահ լինել, որ դուք ներդաշնակ հարաբերությունների մեջ կլինեք ընկերության աշխատակազմի հետ և հաշվի կնստեք ընդհանուր նպատակների ու աշխատելաոճի հետ:

10. *Էմոցիոնալ ինտելեկտ:*

    Սա թերևս ամենակարևոր հատկություններից մեկն է, որը օգնում է ոչ միայն աշխատել, այլև ապրել: Եթե ինտելեկտը ձեր գիտելիքներն են ու տեղեկատվության հետ աշխատելու կարողությունը, ապա էլոցիոնալ ինտելեկտը այդ ամենի իրական իրավիճակներում օգտագործելու կարողությունն է:

    Դա դիմացինի մտադրությունները, տրամադրությունը, ցանկությունները հասկանալու կարողությունն է: Էմոցիոնալ ինտելեկտը ուրիշների և սեփական էմոցիաները կառավարելու և գործնական առաջադրանքների կատարման համար հմտորեն օգտագործելու կարողությունն է:

Ժամանակակից արագ զարգացող աշխարհում նույնիսկ միևնույն աշխատանքը երկար ժամանակ կատարող մարդիկ պարբերաբար կարիք ունեն նորացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Նպատակը

«Փորձը համարվում է իմաստության մայրը»:

Լեոնարդո Դա Վինչի

Հիմնվելով անձի հետաքրքրությունների վրա՝ կազմակերպվում են աշակերտների ճանաչողական այցեր տարբեր աշխատավայրեր, հանդիպումներ մարդկանց և իրենց ոլորտում լավագույնը համարվող մասնագետների հետ, ովքեր կիսում են իրենց փորձն ու գիտելիքները աշակերտների հետ, ներկայացնում իրենց անցած ուղին, կայացման ճանապարհին հանդիպող դժվարությունները, դրանց հաղթահարման հնարները, ինչպես նաև պատմում են իրենց մասնագիտության առանձնահատկությունների մասին: Այդ այցելությունները շատ տպավորիչ են 5-7-րդ դասարանի աշակերտի համար և շատերը այդ տարիքում են կողմնորոշվում:

- Ներկայացված մասնագիտություններից ո՞րը դուք կընտրեիք: Ինչո՞ւ:
- Ներկայացված մասնագիտություններից ո՞րը հաստատ չէիք ընտրի:

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված միջոցառումների համակարգ է, որը երիտասարդությանը նախապատրաստում է մասնագիտություն ընտրելու և աշխատանքի տեղավորվելու գործում, նպաստում անձի բազմակողմանի զարգացմանը, կարողությունների բացահայտմանը: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները ղեկավարում են կրթության, պրոֆտեխնիկական կրթության և աշխատանքային ռեսուրսները տնօրինող մարմինները:

Մասնագիտության ընտրությունը կյանքի ամենապատասխանատու և որոշիչ քայլերից մեկն է: Այդ քայլով է պայմանավորված հետագա մասնագիտական կյանքի հաջողությունը, աշխատավայրում լիարժեքության, բավարարվածության և ներդաշնակության զգացումը: Կատարել մասնագիտական ճիշտ ընտրություն՝ նշանակում է ընտրել այնպիսի մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է սեփական ընդունակություններին, հետաքրքրություններին և անձնային առանձնահատկություններին:

Ի հավելումն այդ ամենին՝ պետք է հաշվի առնել տվյալ մասնագիտության պահանջարկն ու առաջխաղացման, ինքնակատարելագործման հնարավորությունները: Մասնագիտության ընտրությունն առավել բարդ է դեռահասների համար, ովքեր չունեն բավարար փորձ և գիտելիքներ մասնագիտությունների աշխարհի մասին:

Մասնագիտական կողմնորոշման նպատակն է՝

- մշտական փոփոխվող իրավիճակներում անձի՝ ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում, անհատի ուժեղ կողմերի բացահայտում,
- անձին իր ողջ կյանքի ընթացքում տեղեկատվության, խորհրդատվության, ինչպես նաև անհրաժեշտ այլ հնարավորությունների շարունակական տրամադրում՝ մասնագիտության կամ զբաղմունքի ընտրության, կարիերայի պլանավորման հարցերում,
- մասնագիտական կողմնորոշման ենթակա անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների և շարժառիթների բացահայտում,
- մասնագիտական կողմնորոշման մատչելի մատուցում,
- նախընտրությունների առանձնացում,
- անձի հետաքրքրությունների և հնարավորությունների առաջնահերթություն և մասնագիտական կողմնորոշման հումանիստական բնույթ և արժեքների ձևավորում,
- մասնագիտության գիտակցված ընտրություն,
- արդյունավետ զբաղվածության ապահովմանը միտված մասնագիտական կողմնորոշում
- նպատակների հստակեցում,
- հնարավորությունների ուսումնասիրում, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել նպատակին հասնելու համար:

Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակն է աշակերտների մոտ զարգացնել դիրքորոշում, որ ելնելով իրենց ունակություններից և ընձեռնված հնարավորություններից, կարողանան մասնագիտական ճիշտ և գիտակցված ընտրություն կատարել: Մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող բազմաբնույթ աշխատանքների արդյունքում սովորողը կկարողանա տարբերակել իր նախընտրելի կամ գերադասելի ոճը, որն էլ զարգացնելով կամ կատարելագործելով, ամուր հիմք կստեղծի իր ապագա ընտրած մասնագիտության համար:

«Սովորեցնողը սովորում է կրկնակի»

Սենեկա

Գլուխ 2

«Ասա ինձ, և ես կսովորեմ, ցույց տուր, որ հիշեմ»
/Չինական ասացվածք/

Սովորողների հիմնարար հմտությունները

Այժմյան կրթական համակարգում, բացի ուսուցումից, շատ կարևոր է մարդկային որակների զարգացումը: Որպես այդ հիմնահարցի լուծման միջոցներ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Թունի Վագները առանձնացնում է սովորողների հետևյալ հիմնարար հմտությունները.

- Հետաքրքրասիրություն և երևակայություն,
- Քննադատական մտածողություն և խնդիրների լուծում,
- Նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- Տեղեկատվության որոնում և վերլուծություն,
- Համագործակցություն ցանցերի միջոցով և առաջնորդություն ազդեցության միջոցով,
- Գրավոր և բանավոր արդյունավետ հաղորդակցություն,
- Ճկունություն և հարմարվողականություն:

Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված
ծրագրային հիմնադրույթներ.

1. Տարրական դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողներին մասնագիտական գործունեության ոլորտներին, ամենահայտնի մասնագիտություններին ընդհանրականորեն ծանոթացնելն է:
2. 5-7-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտումն է հոգեբանամանկավարժական դիագնոստիկայի միջոցով:
3. 8-9-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը բացահայատված անհատական հոգեբանական առանձնահատկությունների հիման վրա սովորողներին մասնագիտական խորհրդատվության տրամադրումն է:
4. 10-12-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողների կողմից մասնագիտության, ինչպես նաև այն ձեռք բերելու համար համապատասխան ուսումնական հաստատության, գործունեության ոլորտի գիտակցված ընտության և սոցիալ-մասնագիտական որոշակի հարմարման ապահովումն է:

Վերոհիշյալ բոլոր հմտությունների ձևավորումը անհրաժեշտ է իրականացնել ուսուցման ողջ գործընթացի ժամանակ՝ նորագույն մեթոդների կիրառմամբ և որոշակի մշակված ծրագրերով:

Ծնողները նույնպես պետք է ներգրավված լինեն մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում, որը ենթադրում է՝

- Մասնագիտական կողմնորոշման խնդրի կարևորության լուսաբանում,
- Մանկավարժի կողմից սովորողների նախասիրությունների, կարողությունների, հակումների մասին դիտարկումների արդյունքների պարբերական իրազեկման տրամադրում՝ ծնողների ակտիվ աջակցությունն ապահովելու նպատակով:

Մասնագիտական կողմնորոշման արդյունավետ իրականացման արդյունքում ոչ միայն կշահեն սովորողները, այլ նաև հասարակությունը:

Ստեղծարարությունը մարդու մտածողության տեսակ է և մեր ուսումնական գործընթացի նպատակը ստեղծարար մարդ ձևավորելն է: Ստեղծարար մարդ կերտելու և դաստիարակելու համար պետք է փոխել կրթական միջավայրը և մեր մոտեցումները: Անհրաժեշտ է յուրաքանչյուր աշակերտի տալ իրեն համապատասխանող գործունեության ձևը: Դրա համար դպրոցներում նախագծային աշխատանք ենք իրականացնում:

Սովորողներին՝ որպես ապագա մասնագետների, ստեղծարարության զարգացման այլ որակների հետ համադրությամբ ուսուցման գործընթացում հնարավորություն կընձեռի լավագույնս հաղթահարել ժամանակակից աշխարհի մարտահրավերները:

Գլուխ 3

Ինչ է մասնագիտական կողմնորոշումը

«Ի՞նչ մասնագիտությունը ընտրել»:

Հարցադրումն անխուսափելի է, որի պատասխանը փնտրում է յուրաքանչյուր մարդ իր տարիքային կամ սոցիալական զարգացման ինչ-որ մի փուլում:

Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին գնահատել, գիտակցել և արժևորել, գնահատել սեփական կարողությունները և գիտելիքները ապագա մասնագիտությունն ընտրելիս: Աշակերտներին պետք է աջակցել նախասիրություններին ու աշխատաշուկային համապատասխան մասնագիտության ընտրության հարցում,կարիերայի ուղղորդման միջազգային փորձին և Հայաստանում այդ համակարգի առկա վիճակին ու զարգացման հեռանկարին ծանոթացնելու միջոցով: Գործնական ու տեսական վարժանքներն ու ներկայացումները երեխաներին կտրամադրեն գիտելիքներ անձի շարունակական կրթության կարևորության, սկզբունքների և կարիերայի աճին ուղղված կարևոր գործիքների ու փուլերի մասին: Մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ դպրոցում երեխաների հետ քննարկելը կարևոր քայլ է նրանց ուղղորդելու համար, քանի որ երխաները պատկերացում չեն ունենում , թե ինչ է մասնագիտական կողմնորոշումը, աշխատաշուկայում պահանջվող մասնագիտությունները: Քննարկումը աշակերտներին թույլ կտա, որ ճանաչեն անձնական կարողությունները, գնահատեն և ճիշտ ընտրեն մասնագիտությունը:

Հոգեբանական տեսանկյունից և մարդկանց խառնվածքային, տիպաբանության պատկանելությունից ելնելով՝ ամեն մարդ ունակ և առավել արդյունավետ կարող է աշխատել որոշակի փոխհարաբերություն կրող ոլորտում՝ մարդ-մարդ, մարդ-բնություն, մարդ-տեխնիկա, մարդ-գաղափար, և այլն: Այս ոլորտներն իրենց մեջ են կենտրոնացնում բոլոր այն մասնագիտությունները, որոնք հայտնի են ողջ աշխարհում և չեն ճանաչում ազգային պատկանելություն:

Մասնագիտություն ընտրելիս՝ մարդիկ կարող են ուղղորդվել տարբեր պահանջներով: Դա կարող է պայմանավորված լինել ինչպես՝ անձի արժեքային համակարգով, այնպես էլ՝ ընտանիքի գաղափարախոսության ազդեցությամբ: Օրինակ, եթե անձի համար կյանքում առավել կարևոր է նյութական ապահովվածությունը և դրանից բխող սոցիալական հանգստությունը, ապա նա կընտրի այնպիսի մասնագիտություն, որը տվյալ պահին արդիական է և պահանջված:

Բնականաբար, այն առավել եկամտաբեր և սոցիալական կարգավիճակ թելադրող է: Իսկ եթե անձի համար կարևոր է անձնային ինքնաբավարարվածությունը, ինքնադրսևորումը, աշխատանքից հաճույք ստանալը և մարդկությանն օգտակար լինելը, ապա նա կընտրի այն մասնագիտական ոլորտը, որը գուցե այդքան արդիական չլինի, բայց կբավարարի նրա անձնային աճն ու ինքնառեալիզացումը: Շատ սուբյեկտիվ կլինի, եթե փորձենք առանձնացնել, թե որն է այս տարբերակներից ճիշտ կամ սխալ: Յուրաքանչյուրս ունենք մեր ընտրության հնարավորությունը, որը կատարում ենք ներքին բովանդակությանը համապատասխան:

Սակայն կան մի քանի կողմնորոշիչ, օգնական կետեր, ըստ որոնց՝ յուրաքանչյուր ոք, ով չի կարողանում կողմնորոշվել, թե ինչ մասնագիտություն կարելի է ընտրել, կարող է պատկերացում կազմել, թե մոտավորապես որ հասարակական ոլորտում կարելի է գործունեություն իրականացնել՝ միաժամանակ ունենալով և՛ անձնային աճ, և՛ մասնագիտական բավարարվածություն:

Մասնագիտություն ընտրելիս փորձեք սկսել ինքնաճանաչումից՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ եմ ես:
2. Որո՞նք են իմ դրական և բացասական գծերը:
3. Ո՞րն է իմ ապրելու կարգախոսը:
4. Ո՞րն է իմ առաքելությունը:
5. Ինչպիսի՞ մարդ եմ ես:
6. Ինչո՞վ եմ ուզում զբաղվել:
7. Ինչո՞վ չեմ ցանկանա ընդհանրապես զբաղվել:
8. Ո՞րն է հասարակության ամենակարևոր շարժիչ ուժը:

Գրավոր պատասխանելով հետևյալ հարցերին՝ դուք կունենաք ձեր անձնային բնութագիրը, որը ևս մեկ անգամ ընթերցելիս՝ կճանաչեք ինքներդ ձեզ, թե ինչպիսի մարդ եք դուք, հանուն ինչի եք ապրում, որ արժեքներն են կարևոր, ելնելով այդ կարևոր արժեքներից՝ ինչով կցանկանայիք զբաղվել, և հասարակական կյանքն առաջ տանող որ ոլորտում կինքնահիրականացվեիք:

Այս ամենը վերլուծելով և հստակեցնելով՝ հաջորդ քայլը սեփական նպատակների, դրանց իրականացման ուղիների, ուղիների արդյունավետության, դրանց իրականացման հնարավորության, օբյեկտիվության գնահատման և, վերջապես, արդյունքների սխեմատիկ շարադրումն է: Նման մոտեցումը ստեղծում է այն ամենի պատկերը, ինչը կցանկանաք իրականացնել՝որպես հասարակության լիիրավ անդամ:

Հիմնական հասկացությունների սահմանումները

Մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռնած հնարավորությունների, մասնագիտական անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռնելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում:

Կարիերան կյանքի ընթացքում մարդու ծառայության կամ այլ բնագավառներում գրաված դիրքն է, աստիճանը, պաշտոնը:

Կարիերայի ուղղորդումը համակարգված գործառույթ է, որի նպատակն է ուղղորդման սուբյեկտին օգնել շարունակական ինքնազարգացման և ինքնակատարելագործման միջոցով բարձրացնել մրցունակությունը աշխատաշուկայում և ունենալ համակարգված շարունակական առաջընթաց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում:

Մասնագիտական ինքնորոշման էությունը կայանում է ընտրված մասնագիտության, զբաղմունքի, աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրության և իմաստի փնտրման և այն գտնելու մեջ:

Մասնագիտական ինքնագիտակցությունը մարդու ինքնագիտակցությունն է, որի համար որոշակի աշխատանքային գործունեությունը հանդիսանում է միջոց՝ որպես կայացած անձ սեփական արժանապատվությունը հաստատելու համար:

Մասնագիտությունը (լատիներեն՝ profession, նշանակում է հայտարարում եմ իմ գործը) մարդու աշխատանքային գործունեության տեսակ է, սովորաբար նրա գոյության աղբյուրը: Մասնագիտությունը պահանջում է տիրապետել տեսական գիտելիքներին և գործնական հմտություններ, որոնք ձեռք են բերվում հատուկ պատրաստմամբ կամ հատուկ կրթություն ստանալու ընթացքում:

Մասնագիտացումը (լատիներեն՝ specialis, նշանակում է հատուկ, յուրահատուկ) հատուկ պատրաստվածության և աշխատանքային փորձի վրա հիմնված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որն անհրաժեշտ է կոնկրետ գործունեության տեսակի համար այս կամ այն մասնագիտության շրջանակներում: Մասնագիտացումը գիտության, տեխնիկայի, արվեստի որևէ բնագավառի առանձին ճյուղ է:

Զբաղմունքը աշխատանքային գործունեություն է, որը պահանջում է որոշ հմտություն կամ մասնագիտություն և ապրուստի միջոցների աղբյուր է հանդիսանում:

Գլուխ 4

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները 5-7-րդ դասարաններում

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով: Հիմնական դպրոցի 5-րդ դասարանում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նպաստում է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հետևյալ վերջնարդյունքների ապահովմանը.

1. իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ.
2. կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.
3. վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից. 7
4. ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.
5. տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.
6. ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություններ.
7. դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
8. ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.
9. գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս հղումներ անի.

10. արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
11. արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն՝ առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
12. ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
13. դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր.
14. կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:

Մասնագիտական կողմնորոշում թեմայով հիմնական դպրոցի 7-րդ դասարանում կատարելու եմ հետազոտություն՝ հիմնվելով ներքո վարժությունների հիման վրա:

Դասի թեման «Մասնագիտական ընտրության կանոնները»

Նպատակը – Աշակերտներին տեղեկացնել ժամանակակից մասնագիտությունների մասին, օգնել ճիշտ ընտրության հարցում:

Խնդիրները – Բացահայտել աշակերտների ուժեղ և թույլ կողմերը, ընդունակությունները, ցանկությունների և հետաքրքրությունների շրջանակը:

Ընթացքը – Պարզել աշակերտների տեղեկացվածությունը մասնագիտությունների վերաբերյալ: Առաջարկել սովորողներին գրի առնեն նախընտրած մասնագիտությունների ցանկը: Կատարել ներքո վարժությունները:

Վարժություն 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (հեքիաթաթերապիայի կիրառությունը մասնագիտական ինքնորոշման գործընթացում):

1) Տեխնիկայի առաջին փուլում մասնակիցներին մոտիվացնելու նպատակով տրվում է ոչ այնքան էլ արդիական մասնագիտությունների ցանկ: Յուրաքանչյուր անդամ ներկայանում է մասնագիտության դրական և բացասական կողմերով:
2) Տեխնիկայի երկրորդ փուլում առաջարկվում է, թե ով կցանկանա փոխել մասնագիտությունը: Ընտրվում են նոր մասնագիտություններ՝ իրենց թերություններով և առավելություններով:

3) Երրորդ, ամփոփիչ փուլում ինքնաքննադատաբար մասնակիցները վերլուծում են իրենց ինքնուրույնության բաղադրիչները, շեշտադրելով անկախ, ազատ որոշման կայացումը:

Խմբային աշխատանքի նպատակը. Խթանել խմբի մասնակիցների ինքնուրույնությանը՝ մասնագիտական ինքնորոշման և ընտրության նպատակով: Պարագաները. Մասնագիտությունների քարտեր՝ ստորև բերված ցանկին համապատասխան. առևտրական, մսագործ, փոստատար, մաքրող, կաթնավաճառ, անտառապահ, փականագործ, օծանելիք պատրաստող, հեռախոսավար, մեղվապահ, սրբագրիչ, թիկնապահ, քարտաշ, վարժապետ, այգեպան և այլ…

Վարժություն 2. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ
Տեխնիկայի նպատակն է՝ ինքնորոշվել սեփական անձի նախընտրությունների մեջ և փորձել գտնել համապատասխանություն այս կամ այն մասնագիտության հետ: Քայլ 1. Նշեք 3-5 որակներ, որոնք բնութագրական են Ձեր անձի համար:

Ստորև նշված ցանկից ընտրեք Ձեզ համար համակրելի երկու մասնագետ. Անասնաբույժ, Բանկի աշխատող, Բժիշկ, Գիտնական, Գյուղատնտես, Դերասան, Ձիավորական, Ինժեներ, Իրավաբան, Լեզվաբան, Լուսանկարիչ, Խոհարար, Ծրագրավորող, Հաշվապահ, Հոգեբան, Մանկավարժ, Մատուցող, Նկարիչ, Շինարար, Պատմաբան, Ռեժիսոր, Վաճառող, Վարորդ, Վարսահարդար, Ոստիկան, Տնտեսագետ:

1._____

2._____

Քայլ 2. Բնութագրեք այդ մասնագետներին իրենց անձնային և մասնագիտական որակներով.
_____

_____

Փորձեք գտնել համադրություններ Ձեր և ընտրված մասնագետների անձնային որակների միջև: Կրկնվող կամ մոտ որակները գրանցեք ստորև:

_____

_____

Քայլ 3. Մասնագիտությունների նույն ցանկից ընտրեք Ձեզ համար ոչ համակրելի երկու մասնագետի.

1._____

2._____

Բնութագրեք այդ մասնագետներին իրենց անձնային և մասնագիտական որակներով. _____

_____

Փորձեք գտնել համադրություններ Ձեր և ընտրված մասնագետների անձնային որակների միջև: Կրկնվող կամ մոտ որակները գրանցեք ստորև:

_____

_____

Քայլ 4. Քննարկում և ամփոփում. Կա՞ն արդյոք ընդհանրություններ Ձեզ համար նախընտրելի մասնագետների և Ձեր նախասիրությունների միջև: Փորձեք գտնել ընդհանրություններ: Այնուհետև փորձեք գտնել ընդհանրություններ Ձեր թույլ կողմերի և ոչ նախընտրելի մասնագետների միջև: Հետևեք այն մտքերին և զգացողություններին, որոնք առաջանում են Ձեզ մոտ:

Դասն ամփոփել՝ քննարկելով աշակերտների գրառումները, հստակ և հասկանալի բացատրել անհասկանալի և շփոթեցնող նկատառումները:

Նպատակը (ակնկալվող արդյունքը)

Աշակերտների մեջ ձևավորել համոզմունք, որ թեև տարբեր մասնագիտությունները պահանջում են տարբեր կարողություններ և որակներ, այնուամենայնիվ, կան որակներ և կարողություններ, որ կարևոր են բոլոր մասնագիտությունների և զբաղմունքների համար:

Կարողանան գնահատել սեփական կարողությունները և անձնային որակները, ինչը հիմք կհանդիսանա, որպեսզի հետագայում զարգացնեն այն հմտությունները և անձնային որակները որոնք իրենց պակասում են:

Աշակերտները

- կիմանան աշխատողներին բնութագրող հատկանիշները,
- կփորձեն գնահատել իրենց և ուրիշների աշխատանքային կարողությունները,
- կզարգացնեն դպրոցականների տեղեկացվածությունը մասնագիտությունների մասին և մասնագիտական պահանջները:

Եզրակացություն

«Գործը վարպետից է վախենում»

Ի. Կռիլով

Ժամանակակից աշխարհը առանց տեխնոլոգիական առաջընթացին համահունչ գիտելիքների անհնար է պատկերացնել: Այդ պատճառով մասնագիտական կողմնորոշումը չափազանց կարևոր է: Հաճախ մասնագիտության ընտրությունը իրագործվում է առանց որոշակի դրդապատճառների և առանց սովորողի անհատականությունը, հետաքրքրությունները և ընդունակությունները հաշվի առնելու: Աշակերտը շատ հաճախ չի պատկերացնում, թե ինչպիսի անձնային ունակություններ են պահանջվում այս կամ այն մասնագիտության մեջ իր առաջընթացն ապահովելու համար: Թյուր պատկերացումներ ունենալով ընտրած մասնագիտության գործառույթների, առանձնահատկությունների մասին, հետագայում նրանք հիասթափվում են կամ ձախողում են:

Թեման շատ արդիական է, չնայած մեր երկրում չունի պրակտիկ կիրառում: Ոլորտում կան բազում անելիքներ՝ համագործակցում արտադրական ձեռնարկությունների հետ, տարբեր ոլորտների գրասենյակների հետ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, հոգեբանական կենտրոնների հետ, ծնողների հետ: Դպրոցներում հարկավոր է բոլոր առարկաների ուսուցիչների ներգրավվածությունը, ինչպես նաև ծնողների ակտիվ աջակցությունը՝ երեխաների ճիշտ մասնագիտական կողմնորոշման համար:

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված միջոցառումների համակարգ է, որն ուղղված է երիտասարդությանը մասնագիտության ընտրությանը պատրաստելուն՝ հաշվի առնելով անձի առանձնահատկությունները և աշխատաշուկայի սոցիալ-տնտեսական յուրահատկություններն ու պահանջարկները: Մասնագիտության ընտրությունը ունի և անձնական և հասարակական նշանակություն, հետևաբար այն լուրջ, զգույշ և անհատական մոտեցում է պահանջում, քանի որ դեռահասը ոչ միայն մասնագիտության շնորհիվ պետք է ինքնահաստատվի, իր արժանի տեղը գտնի, այլև՝ ինտեգրվի հասարակության մեջ որպես քաղաքացի: Սա է 21-րդ դարի պահանջը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
2. «Մասնագիտական կողմնորոշման ծեռնարկ» 2014թ.
3. Ընտանիք և դպրոց (ամսագիր)
4. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում» (խաղային վարժություններ)
5. «Տեխնոլոգիա» դասագիրք և մեթոդական ուղեցույց 5-րդ դասարան
6. ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվածք /www.irtek.am/
7. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում (Երևան, 2017թ.)
8. www.internest.am
9. www.doctors.am
10. www.168.am
11. www.mycareer.am
12. www.hogeban.am
13. www.wikipedia.org